

ՀՀ ԳԱՎ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ

ԻԳ

2021-2



ISSN 1829-0116

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հանդեսի գլխավոր խմբագիր

բ.գ.դ. Սուրեն Աբրահամյան

Գրական խորհրդի անդամներ՝

բ.գ.դ., ԳԱԱ թղթ. անդամ Աելիտա Դոլուխանյան,
բ.գ.դ. Վարդան Դևրիկյան, բ.գ.դ. Վազգեն Գաբրիելյան,
բ.գ.դ. Պետրոս Դեմիրճյան, բ.գ.դ. Վանո Եղիազարյան,
բ.գ.դ. Սուսաննա Հովհաննիսյան, բ.գ.թ. Սիրանուշ
Մարգարյան, բ.գ.թ. Արմեն Ավանեսյան, բ.գ.թ. Արքմենիկ
Նիկողոսյան, բ.գ.թ. Եվա Մնացականյան

ISSN 1829-0116

© Հանդեսում գետեղված հեղինակներ, 2021-2

© ԳԱԱ Գրականության ինստիտուտ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆՌԱՆԵ ՍԱՐՈՅԱՆ

Ասպիրանտ, ԵՊՀ

ԹԵՄԱՅԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊԸ ՍՈՆԵՏՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

*Բանալի բառեր` հայկական պոեզիա, բանաստեղծական կա-
յուն ձև, տոնետ, օկտավ, սեստետ, քրոնոտոպ, հանգ*

Յուրաքանչյուր ստեղծագործություն, մտքի և հույզի ար-
տահայտություն լինելով, իրենից ներկայացնում է որոշակի
տարածաժամանակային կառույց: Թեման ներկայացնելիս
կամա թե ակամա հարկավոր է դիմել տարածության և ժա-
մանակի` քրոնոտոպի օգնությանը, որը` որպես տերմին, շր-
ջանառության մեջ է դրվել Բախտինի¹ կողմից: «Պատկերը իր
համապարփակ ընդգրկմամբ, կերպարը, կոնֆլիկտը, կոմ-
պոզիցիան, սյուժեն, լեզուն, ժանրը, տաղաչափությունը ի-
րենց հերթին ի մի են գալիս և ամբողջանում այնպիսի
կառույցում, ինչպիսին է համատեքստային շերտերի մեջ
տարածության և ժամանակի (քրոնոտոպի) տիրույթը»²:
Ստեղծագործողի կողմից ընտրված թեման ամբողջանում է,
երբ տեղավորվում է գեղարվեստական ժամանակի ու տա-
րածության տրամաբանության մեջ: Քրոնոտոպի հետաքր-
քիր լուծումների ենք հանդիպում հատկապես չափածոյում,
որտեղ բանաստեղծի առաջ խնդիր կա և՛ թեման ճիշտ տա-
րածաժամանակային կառույցով ներկայացնելու, և՛ ուշադ-
րություն դարձնելու բանաստեղծության ռիթմին և
հանգավորմանը: Եթե սրան գումարենք նաև այն, որ հատ-

¹ Քրոնոտոպի մասին տե՛ս **М. Бахтин**, Вопросы литературы и эстетики, Москва, «Художественная литература», 1975, стр. 234-407.

² **Ա. Բեքմեդյան**, Գեղարվեստական ժամանակի և տարածության (քրոնո-
տոպի) խնդիրը գրականության մեջ, Գրականության տեսության արդի
խնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 154:

կապես բանաստեղծական կայուն ճևերը ունեն տողերի հստակ որոշված քանակ և կրկնվող բառեր կամ արտահայտություններ (ռեֆրեն), ապա չափածո գործ ստեղծելը ավելի կոժվարանա: Բանաստեղծական բարդ կառույց կարելի է համարել նաև սոնետը, որի հայկական պատմությունը սկսվում է Մխիթարյաններից³, տարածվում արևմտահայ, արևելահայ, սփյուռքահայ գրականություններում հասնելով մինչև մեր օրեր: Չնայած նրան, որ հայ բանաստեղծների մեծամասնությունը նախընտրել է հետևել սոնետի դասական իտալական կառուցվածքին⁴, այնուամենայնիվ գրվել են նաև անգլիական սոնետներ⁵, կողայով սոնետներ⁶, ինչպես նաև սոնետների շարքեր և պսակներ⁷: Ժամանակային կառույցի առանձնահատկությունները լավագույնս երևում են սոնետների շարքերում, քանի որ թեման ներկայացվում է մի քանի բանաստեղծությամբ՝ հնարավորություն տալով ժամանակին առավել հստակ երևալ: Կարևոր է փաստել, որ հենց թեմայի ընտրությամբ է որոշվում ժամանակի դերը. «Եթե, դիցուք, գրական երկում մի դեպքում նկարագրվում է բնություն, առարկա, անձ, իսկ մյուս դեպքում՝ հարաբերություն, գործողություն, ապա անպայմանորեն քրոնոտոպային կառույցները այս երկու դեպքերում ընդգծվածորեն կտարբերվեն միմյանցից: Առաջին պատկերման պարագայում ստատիկ (կայուն, անշարժ) նկարագրական տարրերը անհամեմատ գերիշխող կլինեն, իսկ երկրորդ դեպքում անպայմանորեն կկարևորվեն պրոցեսուալ (ընթացքային, ժամանակային) հատկանիշները»⁸: Պատմական կամ ժամանակակից դեպքերին

³ Մխիթարյանների սոնետները տե՛ս «Տաղը Մխիթարեան վարդապետաց», Հատոր առաջին, Վենետիկ, Ի գործարանի սրբոյն Ղազարու, 1852, Հատոր երրորդ, Վենետիկ, Ի գործարանի սրբոյն Ղազարու, 1854:

⁴ Դասական իտալական սոնետը կազմված է երկու քառատողից (քատրես) և երկու եռատողից (տերցետ):

⁵ Անգլիական սոնետը ունի երեք քառատող և մեկ երկտող:

⁶ Կողայով սոնետները կարող են ունենալ տասնհինգերորդ տող կամ երկուսից ավել տերցետ:

⁷ Սոնետների պսակը տասնհինգ տողից կազմված շարք է, որտեղ սոնետները տողերի կրկնությունների շնորհիվ կապված են միմյանց: Ամեն սոնետի վերջին տող հաջորդ սոնետի առաջին տողն է, իսկ տասնհինգերորդ սոնետը կազմված է իրեն նախորդող սոնետների սկզբնատողերից:

⁸ Ա. Բեքմեյան, նշված հոդվածը, Էջ 165:

անդրադարձ կատարելիս՝ բանաստեղծները ժամանակային անցումները նկատելի են դարձնում: Այդպիսին են Ար. Չոպանյանի «Վերհիշում» և Չարենցի «Դոֆինը նաիրական» շարքերը: Զգացմունքներ կամ փիլիսոփայական հարցեր արծարծող սոնետներում ժամանակը ինչ-որ չափով աննկատելի է դառնում (Թ. Թերզյան՝ «Առ անմոռանալին», «Անյուսութիւն», Վ. Թեքեյան՝ «Խեղճ մարդը», «Սերը տասնըվեց, երեսուն եւ վաթսուն տարեկանին»):

Արշակ Չոպանյանի՝ երեք սոնետից բաղկացած «Վերյիշում» շարքում թեման ներկայացվում է ժամանակային հերթականությամբ: Այս սոնետները վերնագրված են «Ա», «Բ», «Գ»: Շարքը տեղ է գտել «Քերթուածներ» ժողովածուում: Դրա առաջաբանում Չոպանյանը նշում է, որ ցանկացել է իր տաղանդը օգտագործել ի նպաստ ազգի. «1895-ի արիւնագանց դեպքերը խորին ցնցում մը յառաջ բերին իմ մէջս, եւ զիս մղեցին մտածելու թէ այդ ահաւոր ճգնաժամին մէջ զոր մեր ցեղը կ'անցնէր՝ ամէն Հայ պարտականութիւն ունէր ոչ միայն իր անհատական շահերը, այլեւ իր հոգեկան նախասիրութիւնները, իր մտավոր յատուկ կոչումը զոհել՝ գէթ պահ, իր ուժերն ի սպաս դնելու համար ամբողջ ցեղին կեանքին ու պատուոյն համար անհրաժեշտ եղող գործունեութեան: Որոշեցի ուրեմն յատկացնել իմ մտաւոր համեստ կարողութիւններս այնպիսի աշխատութեանց, որ ատակ ըլլային ո եւ է չափով անմիջական օգուտ բերել մեր ազգային դատին»⁹: Հայրենիքի առջև ծառայած խնդիրները և կատավող իրադարձությունները ստիպում են Չոպանյանին հայացք նետել դեպի անցյալ: Թեման ներկայացվում է ժամանակային հաջորդականությամբ: Բանաստեղծը չի դիմում ժամանակային խախտումների՝ անախրոնիաների¹⁰: Առաջին և երկրորդ սոնետները բացառապես նկարագրական են և վերաբերում են անցյալին ու հայրենական պայքարին: Ժամանակի շունչը ընթերցողին փոխանցելու համար Չոպանյանը օգտագործում է համապատասխան բառեր՝ հոյաշեն մայր-քաղաք, ամրապայծառ պալատ, նրբաքանդակ պերճ որմեր, ազնվագեղ,

⁹ Տես՝ Ա. Չոպանեան, Քերթուածներ, Փարիզ, տպագր. Տ. Տողրամաճեան, 1908թ, էջ Ը:

¹⁰ Աշ. Զոբաշյան, Նարատալոգիայի հիմնական հասկացությունները, Գրականության տեսության արդի խնդիրներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 300:

քնքշահայաց դշխո: Երրորդ սոնետում ժամանակային թռիչք է կատարվում, բայց այս անգամ արդեն ներկա: Առաջին սոնետի խնջուկքային տրամադրությանը և երկրորդ սոնետի հերոսական պայքարին հակադրվում է երրորդ սոնետը.

Կը վերյիշեմ ասուք... եւ սի՛րտըս թունդ ելած,
Երբ կ'անհետի տեսիլն աղւոր ու ներկային
Կը տարածուի դեմըս անե՛րը մռայլամած,
Կը դողամ դառն ամօթին դո՛ղը ցաւագին...

Շարքի երրորդ սոնետը իրավամբ ամենակարևորն է, և հենց այս սոնետում է թաքնված ամբողջ իմաստը: Համեմատության մեջ դնելով անցյալն ու ներկան՝ բանաստեղծը ներկայի առավել ամբողջական նկարագիր է տալիս և վեր հանում ներկայի խնդիրները: Երրորդ սոնետը տարբերվող է նաև նրանով, որ այստեղ նկատելի է բանաստեղծի վերաբերմունքը իրերին: Այս սոնետում հստակ հարցադրում կա (...Ա՛խ, ո՞վ դարձնէ պիտ` ինձ բամբիռնը երբեմնի.), ինչը բացակայում է նախորդ սոնետներում:

«Վերյիշում» շարքում ժամանակը գծային է և ունի արտահայտման հետևյալ ձևը՝ A₁-A₂-A₃, որտեղ բանաստեղծության ժամանակը և դեպքերի նկարագրությունը առավելապես նման են իրական ժամանակին: «Վերյիշում» շարքում ժամանակային բոլոր դրսևորումները A տառով են նշանակված, քանի որ սոնետները և դրանց ժամանակները իրար հետ օրգանական կապ ունեն:

Եթե Չոպանյանը ներկա խնդիրներին լուծում գտնելու համար սոնետներում պատմական անդրադարձ է կատարում, ապա Չարենցը «Դոֆինը նաիրական» շարքում իր ժամանակակից դեպքերն է քննարկում: Շարքը նվիրված է Աղասի Խանջյանին: Այն բանաստեղծի հոգեկան ապրումների ծնունդն է. «...Չարենցը շատ ծանր տարավ Խանջյանի սպանության լուրը, ըստ ամենայնի գիտակցելով, թե դրանից հետո ինչ կարող է սպառնալ և՛ իրեն, և՛ իր գրական համախոհներին»¹¹: Բանաստեղծությունները, բացի համարակալված լինելուց («Սոնետ առաջին», «Սոնետ երկրորդ», ..., «Սոնետ յոթերորդ և վերջին»), ունեն նաև վերնագրեր՝ «Դոֆինը նաիրական»,

¹¹ **Դավիթ Գասպարյան**, Ողբերգական Չարենցը: Կյանքի և ստեղծագործության նորահայտ էջեր, Երևան, «Նաիրի», 1990, էջ 316:

«Դոֆինը իրական», «Մայրը», «Շրթունքները», «Լեզենդը», «Մահ լեզենդին», «Իմաստություն»: Շարքը ժամանակի տեսանկյունից ուսումնասիրելիս կարելի է բաժանել երեք մասի: Առաջին մասը ընդգրկում է «Դոֆինը նահրական», «Դոֆինը իրական» և «Մայրը» սոնետները: Այս սոնետներում դժվար է կռահել՝ բանաստեղծը մեկ տեսարանի¹², թե՞ իրար հաջորդող դեպքերի մասին է գրում: Նայենք երեք սոնետից վերջված տողեր՝ «Նա պառկած էր նախկին սեղանատան միզում...», «Դո՞ւ ես արդյոք պառկած այդքան անհույզ դեմքով...», «...Այսպես ողբում էր մայրն իր գավակին...»: Եվ իսկապես, այս տողերը կարող են ինչպես մեկ վայրկյանի, այնպես էլ ժամանակի տարբեր կետերի մասին լինել:

Շարքի երկրորդ մասը ընդգրկում է «Շրթունքները», «Լեզենդը», «Մահ լեզենդին» սոնետները: Այս սոնետներում Խանջյանը նույնացվում է Արա Գեղեցիկի հետ: Այսինքն՝ բանաստեղծը, զուգահեռներ տանելով երկու կերպարների միջև, նրանց դարձնում է մեկ ամբողջություն: Չարենցը դիմում է անալեպսիսի¹² օգնությանը: Կարևոր է նշել, որ Չարենցը անալեպսիսի օգնությամբ ոչ թե արդեն ներկայացրած դեպքերի մասին է խոսում, այլ հիշատակում է դեպքեր, որոնք ներկայի հետ ընդհանրապես կապ չունեն. Արա Գեղեցիկը և նրա ժամանակը որևէ կերպ չեն ազդում ներկայի վրա: Սա համեմատություն է, որով Չարենցը փորձում է ընդհանուր եզրեր գտնել շատ վաղուց գոյություն ունեցած, ինչո՞ւ ոչ նաև միֆական կերպարի և իրական մարդու միջև.

...Քանիերորդ անգամն է, որ պարտությամբ հառնած՝
Գերեզմա՛ն ես իջնում, մանո՛ւկ Արա...

Չարենցը չի պատմում Խանջյանի կենսագրությունը: Նա չենց Արա Գեղեցիկի հետ համեմատության միջոցով է կարողանում ընթերցողին Խանջյանի իրական դիմագիծը ցույց տալ: Սրա միջոցով է անցում կատարվում «Իմաստություն» սոնետին, որը շարքի երրորդ մասն է: Այս սոնետում ժամանակը ապագան է.

Եվ լեզենդի նման անիրական, կամ մի
Առասպելի նման ժողովրդի հոգում,
Դու տարինե՛ր կապրես, իբրև մորմոք թաքուն,
Դարձած հեռո՛ւ, անցա՛ծ նայիրյան միֆ...

¹² Աշ. Զորբաշյան, նշված հոդվածը, էջ 302:

Ընթերցողի համար, ով ծանոթ չէ բանաստեղծության հերոսի կյանքին, այս խոսքերը համոզիչ են, քանի որ Չարենցը կարողացել է նախորդ սոնետներում ճիշտ համեմատության դիմել:

Չարենցի «Դոֆինը նաիրական» շարքը սկսվում է ներկայով, համեմատության մեջ դրվում անցյալի հետ, և վերջանում ապագայով: Բանաձևը հետևյալն է՝ A₀-A₁-A₂-A₊/-3-A₊/-4-A₊/-5-A₊m (Եթե ընդունենք, որ առաջին երեք սոնետները ժամանակի միևնույն կետի նկարագրությունն են, ապա բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝ A₀-A₀-A₀-A₊/-1-A₊/-2-A₊/-3-A₊m), որտեղ A₀-ն ներկան է, A₁-ը և A₂-ը՝ ժամանակի սովորական հաջորդականությունն են ցույց տալիս, իսկ A₊/-3-ի, A₊/-4-ի և A₊/-5-ի կապ կա նաև անհիշելի ժամանակների կերպարների հետ: Իսկ A₊m-ը ապագան է, և թվի փոխարեն m-ով է նշված, քանի որ խոսքը ընդհանրապես ապագայի մասին է, ոչ թե ապագայի կոնկրետ կետի:

Թ. Թերգյանի «Անյուսութիւն»¹³ և «Առ անմոռանալին»¹⁴ ստեղծագործությունները կազմված են երկուևական սոնետից: Հարց է առաջանում, թե արդյո՞ք կարող ենք երկու բանաստեղծությունից կազմված ստեղծագործությունը շարք համարել: Բանաստեղծությունները հանդես են գալիս ընդհանուր վերնագրի տակ և ներկայացնում են միևնույն թեման: Դրանք նաև ունեն նույն կամ իրարից քիչ տարբերվող հանգավորում: Այս ամենը հաշվի առնելով՝ «Անյուսութիւն» և «Առ անմոռանալին» ստեղծագործությունները հնարավոր է վերլուծել ճիշտ այնպես, ինչպես շարքը:

«Անյուսութիւն» շարքը փիլիսոփայական բնույթի երկ է: Սոնետները առանձին վերնագրեր չունեն և համարակալված են «Ա» և «Բ» տառերով: Սոնետներում առկա են բանաստեղծի և Աստծո կերպարները, սակայն երկխոսություն չկա: Այն ամբողջովին բանաստեղծի՝ Աստծուն ուղղված մենախոսությունն է:

Թերգյանի այս բանաստեղծություններում ժամանակը երկրորդ պլան է մղված: Բանաստեղծին չեն հետաքրքրում դեպքերը: Նրա համար կարևոր է այդ դեպքերի արդյունքը, որը

¹³ **Թովմաս Թերգյան**, Բանաստեղծութեանց ամբողջական հաւաքածոյ, Առաջին հատոր, Վենետիկ, Ս. Ղազար, 1929, էջ 99:

¹⁴ Նույն տեղում, էջ 295-296:

հարցեր է առաջացնում մարդու մոտ, և դրանց հասցեատերը Աստված է: Շարքը առանձնահատուկ է նրանով, որ բանաստեղծությունը կարդալու ժամանակը և գեղարվեստական ժամանակը համընկնում են, քանի որ բանաստեղծությունը հեղինակի ուղղակի խոսքն է: Սակայն, կարևոր է նաև նշել, որ գործ ունենք խոսքի, այսինքն՝ մտքի հետ և ոչ թե գործողության նկարագրության (բանաստեղծը նշում է ինչ-որ դեպքերի մասին, սակայն սրանք կոնկրետ դեպքեր չեն, այլ ուղղակի երևույթներ, որոնք ինչ-որ տեղ կարող են պատահած լինել): «Անյուսուփին» շարքում ժամանակը սերտաճել է մտքի հետ: Այստեղ կա $A_1^*-A_2^*$, որտեղ ոչ իրական ժամանակը նշանակել ենք * -ով:

«Առ անմոռանալին» շարքը կազմված է «Նուագ Ա», «Նուագ Բ» սոնետներից: Այն իրենից ներկայացնում է սիրային ստեղծագործություն: Չոպանյանը հետաքրքիր կերպ է բնութագրում Թերզյանին. «...ան սիրեց ու երգեց»¹⁵: Չարմանալի չէ, որ Թերզյանի «երգերում» (բանաստեղծություններում) սիրո թեման իր ուրույն տեղը պետք է ունենար: «Առ անմոռանալին» շարքում իրար են միահյուսված անցյալի կորուստը («Երեք տարի է, ո՛վ հոգևոյս իմ հոգեակ, / Յափշտակեց տարաւ քեզ ծով գըրկերես...»), ներկայի ամայությունը («Կ'անցնիմ այրի դրախտեղ...») և երազանքը, որը թեև ապագայի հետ է կապված, սակայն իրականություն դառնալ չի կարող: Այստեղ կարևոր է ոչ այնքան իրական ժամանակը և դեպքերը, այլ այն եթերային, անիրական ժամանակը, որի մասին երազում է բանաստեղծը:

Ա՛լ յոգնեցայ, եկուր գլխիկդ իմ ուսիս
Ոսկի վարսիւք ճառագայթեալ՝ հանգչեցո՛ւ,
Այն ծիծաղով որ ցուլացումն էր անշուշտ
Այտերուդ վրայ դրախտէն հոսող շողերու:

Շարքում ապագայի ժամանակը անցյալի ժամանակի արտացոլումն է: Իսկ այն էակը, ում ուղղված են բանաստեղծությունները, այլևս չկա («...թերեւս այդ յասմիկ / Հիմայ մէկ մասն է մարմնիկիդ...»): Այդ իսկ պատճառով ժամանակը տեղափոխվում է մտավոր տիրույթ, դառնում երբևէ իրականու-

¹⁵Նույն տեղում, էջ ԺԱ:

թյուն չդարձող ապագայի արտահայտում: «Առ անմոռանալին» շարքում իրական ժամանակը փոխակերպվում է երագայինի՝ իր մեջ պահպանելով իրականին հատուկ դեպքերը: Շարքը ունի $A_1-A_2^*$ բանաձևը, որտեղ առաջին սոնետից դեպի երկրորդ սոնետ սահուն անցում է կատարվում իրական ժամանակից անիրականին:

Բազմաթիվ սոնետների, այդ թվում նաև սոնետների շարքերի հեղինակ է Թեքեյանը, ով Թեոլոյանի կարծիքով «եղաւ արժանի արուեստագէտի մը տիպարը»¹⁶: Թեքեյանի «Խեղճ մարդը» կազմված է «Ա», «Բ», «Գ» սոնետներից, որոնք, սակայն, առանձին վերնագրեր չունեն: Այս շարքի բոլոր սոնետները սկսվում են «Խեղճ մարդ» բառերով, որը որոշ չափով նաև ինքնակենսագրական բնույթի երկ կարելի է համարել:

Անոնց որոնց ընծայել ուզեց ամբողջ իր հոգին
Հին, հին ատեն, չըկրցաւ մինչեւ անգամ մատնանիշ
Ընել իր սերը անհուն և ըսպանեց անձկագին...

Այնպես որ երբ զինք կանչեն օր մ'աշխարհէ մը ուրիշ
Ու մօտենայ մահն իրեն, պիտի կրնայ դժուարաւ
Տանիլ խեղճ մարդն որ երբեք սիրտը պարպել չըկրցաւ:

«...Թեքեյան հոգեկան աշխարհին վերլուծողն է: Հաւատացող մը՝ տառապանքին, ցաւին ու երջանկութեան: Այս երեքին միջեւ եզրերը ներդաշնակ են ու ոչ մէկ շեղ ճառագայթ կայ մէկէն միւսը»¹⁷: Շարքում խոսվում է անցյալից ներկա ընկած ժամանակահատվածի մասին, երբ կատարած սխալները և ապրած կյանքը մարդուն փորձ են փոխանցում, դարձնում ավելի խորաթափանց («...ու կը խորհի ինք՝ խեղճ մարդ, / Թէ իրեն պետք է այլեւս ըլլալ մահուան չափ հանդարտ»): Բանաստեղծը գերժ է մնացել դեպքերը զուտ պատմողական ձևով նկարագրելուց և առավել կարևոր է համարել ընդգծել դրանց տված փորձը: «Խեղճ մարդը» շարքում ժամանակը ունի հետևյալ տեսքը՝ $A_1-A_2-A_3$, որտեղ դեպքերի հաջորդականությունը խախտված չէ:

Կյանքը տարբեր տարիքային տեսանկյուններից հասկանալու փորձ է «Սերը տասնըվեց, երեսուն եւ վաթսուն տարե-

¹⁶ Մինաս Թեօլեյան, Վահան Թեքեյան, Սթամպուլ, 1933, էջ 10:

¹⁷ Նույն տեղում, էջ 14:

կանին» շարքը, որի սոնետները ունեն առանձին վերնագրեր՝ «Աղբիւրը», «Ծովը», «Ճահիճը»: Այս շարքի սոնետներում թեև ժամանակը դարձյալ գծային է, այնուամենայնիվ սոնետները իրար հետ այդքան էլ կապված չեն: Ամեն սոնետում թեման զարգանում և ավարտին է հասնում՝ առանց հաջորդ սոնետներում շարունակվելու: Այստեղ կարելի է ասել, որ ժամանակը, գծային լինելուց բացի, ամեն սոնետում որպես փակ համակարգ է հանդես գալիս: Բանաստեղծը ընտրել է մեկ ընդհանուր վերնագիր շարքի համար, սակայն ամեն սոնետում ամբողջական է ներկայացրել թեմայի մեկ կողմը և հաջորդ սոնետներում դրանց անդրադարձ չի կատարել: Հետաքրքիր է, որ սոնետների վերնագրերը ժամանակի (տարբեր տարիքների) ճիշտ պատկերն են ցույց տալիս: Տասնվեց տարեկանի սերը աղբյուրի հետ է համեմատվում, երեսուն տարեկանինը՝ ծովի, իսկ վաթսուն տարեկանի սերը՝ ճահճի: Շարքում կա A-B-C հաջորդականությունը, որտեղ A, B, C տառերը նշանակում են, որ բանաստեղծը ժամանակները որպես առանձին մեծություններ է ընդունել: Չնայած որ երեսուն տարեկանը հաջորդում է տասնվեցին, և վաթսունը՝ երեսունին, սակայն բանաստեղծը այս տարիքների՝ միմյանց վրա ունեցած ազդեցության մասին չի խոսում:

Սոնետների շարքերում թեմայի ընտրության և դրա ժամանակային արտահայտման ձևի կողքին կարելի է քննարկել տաղաչափական առանձնահատկությունը: Սոնետը ենթադրում է կառուցվածքային կանոնների պահպանում, այսինքն՝ բանաստեղծը կաշկանդված է և չի կարող շատ շեղվել դասական կանոններից: Բացի այդ՝ կարևորվում է տաղաչափական կառույցի ընտրությունը, որը պետք է ընդհանուր լինի սոնետների համար: Սա, բացի թեմայից, ևս օգնում է բանաստեղծություններին և՛ ներքին (թեմա), և՛ արտաքին (տաղաչափություն) կապ ունենալ միմյանց հետ: Վերոնշյալ շարքերում սոնետները հետևում են իտալական սոնետի կառուցվածքին: Հետաքրքիր շեղումներ կան Թերզյանի սոնետներում: «Անյուստութիւն» շարքի «Բ» սոնետը կազմված է ոչ թե տասնչորս, այլ տասներեք տողից և ունի մեկ քատրեն և երեք տերցետ: Իսկ «Առ անմոռանալին» շարքի սոնետները ունեն կոդա՝ երրորդ տերցետ:

Հաջորդ ընդհանրությունը, որ կա շարքերի սոնետներում, միանման հանգավորման ընտրությունն է: Չոպանյանի «Վեր-

հիշում» շարքի սոնետները ունեն $a-b-a-b/c-d-c-d/e-f-e/f-g-g$ հանգավորում: Տողերում օգտագործված է տասներկու վանկ: Չարենցի սոնետների տողերը տատանվում են տասից տասներեք վանկի միջև: Բոլոր օկտավները ունեն օղակաձև հանգավորում և երկու կամ չորս հանգ: Սեստետները ունեն $e-f-e/f-g-g$ հանգավորում: Միայն վերջին սոնետի սեստետի հանգավորումն է փոքր-ինչ տարբեր՝ $e-f-e/g-h-g$: Չարենցը այս սոնետներում օգտագործել է իր կողմից շատ սիրված մոտավոր հանգերը՝ տողի վերջին վանկում տառեր ավելացնելու և պակասեցնելու միջոցով:

«Դոֆինը նահրական»

...Արքայաճկը, ննջած դափնիների ներքո,

Արնաշաղախ քաղած իր սեփական ձեռքով:

Այսպիսի հանգեր կան սոնետների մեծ մասում («Դոֆինը իրական»՝ սուգով-քո, դեմքով-քո, «Դոֆինը իրական»՝ դրած-նրա, «Շրթունքները»՝ վրա-հուրհրան, վրա-իրար, «Մահ լեզենդին»՝ նա-դառնաս, «Իմաստություն»՝ մի-միֆ): Նման հանգ Չարենցը ստեղծում է մի շարք հնչյունների օգնությամբ՝ վ-ֆ՝ թովիչ-Դոֆին, չ-ճ, ր-ռ՝ չար-պատճառ, բ-փ՝ անբառ, ճամփան, ս-զ՝ այսօր-հզոր, ց-ծ՝ ոռնաց-հառնած, կ-ք՝ անկում-կյանքում: Կան նաև տարբեր ձայնավորների միջոցով կազմված հանգեր՝ երեսը, Աղասի: Քիչ չեն նաև դեպքերը, երբ հանգավորվող վանկերից մեկում առկա է «յ» ձայնորդը՝ ջահ, Խանջյան:

Թեքեյանի վերոնշյալ սոնետները տողերում ունեն տասնչորս վանկ: «Սերը տասնըվեց, երեսուն եւ վաթսուն տարեկանին» շարքի բոլոր և «Ճահիճը» շարքի առաջին և երրորդ սոնետների օկտավերը ունեն խաչաձև հանգավորում և հանգերը քատրենից քատրեն փոխվում են՝ $a-b-a-b/c-d-c-d$: «Խեղճ մարդը» շարքի երկրորդ սոնետի քատրենը ունի օղակաձև հանգավորում $a-b-b-a/c-d-d-c$: Օկտավի հանգերը սեստետում չեն կրկնվում: Բոլոր սեստետներում երեք հանգ կա և հանգավորման մի քանի ձև՝ $e-f-e/f-g-g$, $e-f-f/e-g-g$, $e-e-f/g-g-f$:

Ինչպես նկատեցինք, սոնետների շարքերում ժամանակը տարբեր կերպ կարող է արտահայտվել: Դա կախված է նաև թեմայի ընտրության առանձնահատկություններից և տարբեր ընկալումներից: Եթե կոնկրետ դեպքերի մասին խոսելիս բանաստեղծության ժամանակը նման է իրական ժամանա-

կին, ապա հարցադրումներ անելիս ժամանակը դառնում է անշոշափելի: Այն կարող է համընկնել հարցի մասին խոսելու ժամանակի տևողության հետ, կամ ընդհանրապես հեռանալ իրական ժամանակից: Իսկ կառուցվածքային տարրերի (տողերում վանկերի քանակի և հանգավորման ձևի) և ժամանակը ներկայացնելու ձևի միջև կապ չի նկատվում: Այդ երկու մեծությունները, լինելով միևնույն բանաստեղծության մաս, իրարից անկախ են հանդես գալիս: Թեման և ժամանակը իրար հետ կապված են, սակայն որևէ կերպ չեն ազդում հանգավորման տեսակի ընտրության վրա:

NRANE SAROYAN, “CONNECTION BETWEEN THE THEME AND TIME IN SONNET CYCLES” - The purpose of the article is to analyze the connection between the theme and time in sonnet cycles. There are a lot of sonnets in Armenian poetry. Some poets (Arshak Chopanyan, Yeghishe Charents, Tovmas Terzian, Vahan Teqeyan and others) wrote sonnet cycles. It is written in the article, that how the theme and time are connected to each other and how a certain theme affects the expression of time.

Key words: Armenian poetry, poetry fixed forms, sonnet, octave, sestet, chronotope, rhyme.

НРАНЕ САРОЯН, «СВЯЗЬ МЕЖДУ ТЕМОЙ И ВРЕМЕНИ В ЦИКЛАХ СОНЕТОВ» - Цель статьи-анализировать связь между темой и времени в циклах сонетов. В армянской поэзии часто встречаются сонеты. Некоторые поэты (Аршак Чопанян, Егише Чаренц, Товмас Терзян, Ваган Текеян и другие) написали циклы сонетов. В статье говорится, как тема и время взаимосвязаны между собой и как определенная тема влияет на выражение времени.

Ключевые слова: армянская поэзия, твердые формы стихосложения, сонет, октав, сестет, хронотоп, рифма.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ - ՀԵՂԻՆԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ.....3

ANNA STEPANYAN - THE PROBLEM OF THE AUTHOR'S
POSITION IN THE ARMENIAN MEDIEVAL CAFES13

АННА СТЕПАНЯН - ПРОБЛЕМА АВТОРСКОЙ ПОЗИЦИИ
В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ КАФА13

ԼԵՎՈՆ ԱԼՈՅԱՆ - ԿՆՈՋ ԿԵՐՊԱԿՈՐՈՒՄԸ ԾԵՐԵՆՏԻ ՎԵՊԵՐՈՒՄ15

LEVON ALOYAN - WOMAN'S PORTRAYAL IN TSERENTS'S NOVELS34

ЛЕВОН АЛОЯН - ОБРАЗ ЖЕНЩИНЫ В РОМАНАХ ЦЕРЕПЦА35

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ - ԶԱՋՆԱԶԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԵՎ ԻՍԱԿԱԿՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ36

ANI GAZARYAN - PHENOMENON OF BRAVE NAZAR IN ASSESSMENT
OF TUMANYAN AND ISAHAKYAN42

АНИ КАЗАРЯН - ФЕНОМЕН ХРАБРОГО НАЗАРА В ОЦЕНКЕ
ТУМАНЯНА И ИААКЯНА.....43

ՇՈՂԻԿ ԽԱՇԱՏՐՅԱՆ - ԱՎ. ԻՍԱԿԱԿՅԱՆԻ ՕՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ44

SHOGHIK KHACHATRYAN - GENRE SPECIFICATIONS OF ISAHAKYANS
DIARY NOTIS48

ШОГИК ХАЧАТРЯН - ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ ДНЕВНИКОВЫХ
ЗАПИСЕЙ АВ. ИСААКЯНА48

ՀԱՅՎ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՆՈՐԱՎԵՊԵՐԸ.....50

HAYK HOVHANNISYAN - ZAPEL YESAYAN'S NOVELS57

АЙК ОГАННИСЯН - НОВЕЛЛЫ ЗАПЕЛА ЕСАЯНА58

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ - ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՍԵՂԾ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱԿՈՐՈՒՄԸ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՏԻ «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ» ԿԵՊՈՒՄ.....	59
SATENIK AVETISYAN- THE PORTRAYAL OF THE NATIONAL CULTUR-CREATING IDENTITY IN AKSEL BAKUNTS «KHACHATUR ABOVYAN» NOVEL.....	74
САТЕНИК АВЕТИСЯН- ИЗОБРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРУТВОРЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ В РОМАНЕ АКСЕЛЯ БАКУНЦА «ХАЧАТУР АБОВЯН»	74
ՆԱԶԵԼԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ - ԱԿ. ԲԱԿՈՒՆՏԻ «ՄԹՆԱԶՈՐԻ ԶԱՐԹԸ» ՊԱՏՄԱԿԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	76
NAZELI HAKHVERDYAN - PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE STORY OF AK. BAKUNTS "THE MYSTERY OF" MTNADZOR"	83
НАЗЕЛИ АХВЕРДЯН - ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ РАССКАЗА АК. БАКУНЦА ""МИСТИКА" МТНАДЗОРА"	83
ՀՐԱԳՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ - ՕՏԱՐՄԱՆ ԴՐԱՄԱՆ ՈՐԲՈՒՆԻ «ՓՈՐՁԸ» ԵՎ ՇԱՀՆՈՒՐԻ «ՆԱՀԱՆՉԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ» ԿԵՊԵՐՈՒՄ	85
HRACHYA SARIBEKYAN- THE ALIENATION DRAMA IN SHAHAN SHAHNOURS «RETREAT WITHOUT A SONG» AND ZAREH VORPUNIS NOVEL «THE ATTEMPT»	95
ГРАЧЬЯ САРИБЕКЯН- ДРАМА ОТЧУЖДЕНИЯ В РОМАНАХ ШАХАНА ШАХНУРА «ОТСТУПЛЕНИЕ БЕЗ ПЕСНИ» И ЗАРЕ БОРБУНИ «ПОПЫТКА»	95
ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ - ԶԱՌՍԸ ԵՎ ԿՈՍՄՈՍԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՏԻԵԶԵՐԹԸ ՊԱՏԿԵՐԱԿՈՐՈՂ ՆՇԱՆՆԵՐ Ն. ՍԱՐԱՖՅԱՆԻ «ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ Է.ՇԱՖԱԿԻ «ՍՏԱՍՐՈՒԼԻ ԲԻՃԸ» ԵՐԿԵՐՈՒՄ	97
LILIT SEYRANYAN - CHAOS AND COSMOS AS SIGNS OF THE CREATION OF THE NATIONAL UNIVERSE IN THE WORKS OF N. SARAFYAN "THE PRINCESS" AND E. SHAFAK "THA BASTARD OF ISTANBUL"	119
ЛИЛИТ СЕЙРАНЯН - ХАОС И КОСМОС КАК ЗНАКИ СОЗИДАНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ВСЕЛЕННОЙ В ПРОИЗВЕДЕНИЯХ Н. САРАФЬЯНА "КНЯГИНЯ" И Э. ШАФАК "СТАМБУЛЬСКИЙ БАСТАРД"	120

ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - ԳՈՒԹԱՆ ԵՐԳԵՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐԻ ՊՈԵՏԻԿԱՅՈՒՄ122

SEYRAN GRIGORYAN - GOGHTAN SONGS IN THE POETICS OF VANAGN DAVTYAN'S POEMS151

СЕЙРАН ГРИГОРЯН - ГОХТАНСКИЕ ПЕСНИ В ПОТИКЕ ПОЭМ ВААГНА ДАВТЯНА151

ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈԱՆԵ ՍԱՐՈՅԱՆ - ԹԵՄԱՅԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊԸ ՍՈՆԵՏՆԵՐԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ153

NRANE SAROYAN - CONNECTION BETWEEN THE THEME AND TIME IN SONNET CYCLES163

НРАНЕ САРОЯН - СВЯЗЬ МЕЖДУ ТЕМОЙ И ВРЕМЕНИ В ЦИКЛАХ СОНЕТОВ163

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՔ

ՎԱՀԵ ԱՐՍԵՆՅԱՆ - Վ. ՇԵՔՍՊԻՐԻ «ՄԱԿԲԵԹ»-Ն ՈՒ ԴՐԱ ԱՍԵՆԱՅՈՒՐՈՐԻՆԼԱԿ ԵՎՐԱՆԱՎՈՐՈՒՄԸ՝ Ա. ԿՈՒՐՈՍԱՎԱՅԻ «ԱՐՅՈՒՆԵ ԳԱՀ»-Ը. ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ164

VAHE ARSENYAN - W. SHAKESPEARE'S «MACBETH» AND ITS UNIQUE FILM ADAPTATION «THRONE OF BLOOD» BY A. KUROSAWA. COMPARATIVE ANALYSIS173

ВАГЕ АРСЕНЯН - «МАКБЕТ» У. ШЕКСПИРА И ЕГО УНИКАЛЬНАЯ ЭКРАНИЗАЦИЯ А. КУРОСАВЫ «ТРОН В КРОВИ». СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ174

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՍԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ - ԳՐԱՎԱՆԱԳԵՏ, ԹԱՐԳՄԱՆԻՉ, ԱՐՁԱԿԱԳԻՐ ՈՒ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ ԱԼԵՔՍԱՆԴԻ ԹՈՓՉՅԱՆԸ175

ARMEN AVANESYAN- LITERARY CRITIC, TRANSLATOR, NOVELIST AND PLAYWRIGHT AL. TOPCHYAN..... 182

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

АРМЕН АВАНЕСЯН- ЛИТЕРАТУРАВЕД, ПЕРЕВОДЧИК, ПРОЗАИК И ДРАМАТУРГ АЛ. ТОПЧЯН.....182

ՏԵԶՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ - ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....183

ARKMENIK NIKOGHOSYAN - ABOUT A POEM ATTRIBUTED TO YEGHISHE CHARENTS188

АРКМЕНИК НИКОГОСЯН - ОБ ОДНОМ СТИХОТВОРЕНИИ, ПРИПИСЫВАЕМОМ ЕГИШЕ ЧАРЕНЦУ189

ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵԳ ԲԱԳՐԱՏՅԱՆ - ԿՈՐՍՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍԱՀ-ՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՂՐՈՂ ՀԵՐՈՍԻ ՄԵՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈԼԻ ԹԱՐԱԴԻԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....190

AREG BAGRATYAN - THE PROBLEM OF LONELINESS OF THE CHARACTER LIVING IN THE FRAMEWORKS OF LOST TIME AND IDENTITY IN THE WORKS OF GOLI TARAGHI202

АРЕГ БАГРАТЯН - ПРОБЛЕМА ОДИНОЧЕСТВА ГЕРОЯ, ЖИВУЩЕГО В ПРЕДЕЛАХ УТЕРЯННОГО ВРЕМЕНИ И ПРОСТРАНСТВА, В ПРОИЗВЕДЕНИЯХ ГОЛИ ТАРАГИ203

ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ - ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱՅԻ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....205

CHOUCHANIK THAMRAZIAN - «LA NÉCESSITÉ POÉTIQUE DE LA DISTANCE ; À PROPOS DE LA TRADUCTION FRANÇAISE DE L’UN DES POÈMES D’ANNA AKHMATOVA223

ШУШАНИК ТАМРАЗЯН: ПОЭТИЧЕСКАЯ НЕОБХОДИМОСТЬ РАССТОЯНИЯ ; О ПЕРЕВОДЕ ОДНОГО СТИХОТВОРЕНИЯ

АННЫ АХМАТОВОЙ.....224

ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ԱՍՖԱՐՅԱՆ - ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱԶԵՎԱԶՓԱՅԻՆ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՆՏԻՍԵԴԻԱՅԻՆ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱԿՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ.....225

ARMAN SAFARYAN - FEATURES OF THE GENRE-FORMAT
CLASSIFICATION OF JOURNALISM IN THE ERA OF MULTIMEDIA
TRANSFORMATIONS235

АРМАН САФАРЯН - ОСОБЕННОСТИ ЖАНРО-ФОРМАТНОЙ
КЛАССИФИКАЦИИ ЖУРНАЛИСТИКИ В ЭПОХУ МУЛЬТИМЕДИЙНЫХ
ТРАНСФОРМАЦИЙ.....236

ՀՈՐԵԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ - ԱԼԲԵՐՏ ՍՈՒՇԵՂՅԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ.....237

SUREN ABRAHAMYAN - THE PHENOMENON OF
ALBERT MUSHEGYAN.....237

СУРЕН АБРААМЯН - ФЕНОМЕН АЛЬБЕРТА МУШЕГЯНА.....237

ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ, ԻՐԻՆԱ ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ - ԱՌԱԿՆԵՐԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿԱՎԱՆ ԱՐԺԵՔԸ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 241

АННА СИМОНЯН, ИРИНА ПОНОМАРНКО - ВОСПИТА-ТЕЛЬ-НАЯ
ЦЕННОСТЬ БАСЕН В ДОШКОЛЬНОМ ВОЗ-РАСТЕ 247

ANNA SIMONYAN, IRINA PONOMARENKO - EDUCATIONAL VALUE
OF AMBASSADORS IN PRESCHOOL 248

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ

ԻԳ

2021-2

ISSN 1829-0116

- © Հանդեսում գետեղված հեղինակներ, 2021-2
- © ԳԱԱ Գրականության ինստիտուտ

**ՀՀ ԳԱՎ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Համարի թողարկման պատասխանատու՝
Սուրեն Արրահամյան

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Մ.
Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ոչ
առևտրային կազմակերպություն

03.03.1997

(գրանցման 286.0120, վկայական Բ 003222)

Հասցե՝ Գր. Լուսավորչի 15

Հեռ. և հեռատիպ՝ 010-56-32-54, 055-62-44-77

e-mail՝ litinst.@sci.am,

Ստորագրված է տպագրության 16.11.2021:

Չափսը՝ 60x84 1/16

Թուղթը՝ օֆսեթ

Ծավալը՝ 16.0 տպ. մամուլ

Գինը՝ պայմանագրային



ARMAY PUBLISHING HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4-րդ հարկ Yerevan, Baghramyan st. 3, 4th floor
հեռ.՝ +374-10347335, +374-99373130 tel: +374-10347335, +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com Email: armav1815@gmail.com